ԽՈՍՔԵՐ Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՑ

Ես աղքատ, հասարակ գյուղացու զավակ եմ, բայց եթե այսօր եմ ինչ որ եմ պարտական եմ միայն իմ Ազգին, իմ ժողովրդին, իմ Եկեղեցուն, Ս. Էջմիածնին։ Ես կարող էի նախիր պահող կամ տավարած լինել. այսօր Հովվապետ եմ պարտական լինելով իմ Եկեղեցուն և հոտին։

***

Մեր սուրբերի հոգիները երկնքից պիտի դիտեն Մեր ամեն քայլը, խոսքն ու գործը, ծառայությունը Եկեղեցուն և հոտին։ Պիտի կարողանա՞նք նրանց գծած շունչով ընթանալ։ Ահա՛, սիրելի՛ք, ինչ հոգս է պատում Մեր սիրտը այս սրբազան վայրկյանին։ Ուստի և մարգարեի նման մեր աչքերը դեպի երկինք ենք բարձրացնում՝ «Տէր հովուեսցէ զիս և ինձ ինչ ոչ պակասեսցի»։

***

Ընդունելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի դերագահ դիրքը, կկամենայինք, որ ըստ ամենայնի պահպանվեր նրանց պատշաճ հարաբերությունը ըստ պաշտոնի և կոչման...։ Միասնականությունը կամենում ենք իրականացած տեսնել գիտակցական փոխադարձ հասկացողությամբ և հարգանքով կատարված պարտքերի, նպատակների և ձգտումների միության մեջ...։ Մենք, իբրև Կիլիկիո Հայրապետական Աթոռի Գահակալ, պատրաստ ենք Մեր կարելին բերել, հավերժացնել ավելի սերտ, ավելի գիտակցական և միևնույն ժամանակ ավելի շրջահայաց հարաբերություն Մայր Աթոռի հետ։

***

Լավ է պատերազմի դաշտում ընկածների հիշատակը պահել և երախտագետ լինել նրանց, ովքեր իրենց արյունով Ազգ և Եկեղեցի են պահպանել, ինչպես Վարդանանք, բայց պակաս արժեքավոր չէ խավարի և անդիտության դեմ պայքարողների գործը։

***

Պատմության մեջ էականը այն չէ, թե մի ազգ ո՞րչափ հզոր է եղել, նվաճումներ կատարել, շատ անգամ իրենից թույլ ազգերին ոտքի տակ արորել, այլ թե ի՞նչ հոգևոր ժառանգություն է թողել իր ազգին և մարդկության։ Ազգերի կյանքի մեջ ամենից նշանակալիցը, ուրեմն և մնայունը՝ նրանց ստեղծագործությունն է, մշակույթը։ Ապարախտ է եղել մեր վիճակը քաղաքական տեսակետից, բայց ամաչելու պատճառ չունենք հոգևոր և մշակութային կյանքի մարզերում։

***

Աստուծո հայրության գաղափարով և հավատով մարդիկ դառնում են եղբայրներ, որովհետև խաղաղությունն է հաստատվում երկրի վերա։ Ուր ասն է, սիրելի՛ք, ատելությունն է, վեճն ու կռիվը, այնտեղ ոչ Աստված կա, ոչ խաղաղություն։ Խաղաղության մեծ կարիք ունի մեր ժողովուրդն էլ. բայց փոթորիկ ցանելով խաղաղություն չենք հրնձի։ Մենք պետք ունենք խաղաղ և շինարար գործունեության։ Նախանցյալ պատերազմի տարիներին մեր ստացած վերքերը դեռևս չեն բուժված։ Զգաստանանք, շրջահայաց լինենք, հասկանանք մեր վիճակը, հավաքենք մեր ցրված ուժերը, առանց խոսքի ու աղմկարարության, բոլորվենք Եկեղեցու շուրջ, որը միության, խաղաղության, սիրո և եղբայրության հաստատությունն է։

***

Մեր եկեղեցական բարձր Աթոռներից յուրաքանչյուրի զարգացումը, բարոր վիճակը՝ փոխադարձաբար զարգացումն ու բարոր վիճակն է մյուսների։

Առաջին հերթին Մայր Աթոռն ունեմ նկատի։

Ես առիթը կունենամ պաշտոնապես էլ արտահայտվելու այս մասին, բայց այժմյանից իսկ ուզում եմ, որ մեր ժողովուրդն իմանա, թե Կիլիկյան Աթոռը, ներքին վարչական խնդիրների մեջ անկախ, միշտ պի-

տի մնա Հայաստանյայց Եկեղեցու Ընդհանրական-Հայրապետության հետ, ընդհանուր եկեղեցական հարցերի մեջ, և եղբայրական սերտ հարաբերություններ պիտի պահի Մայր Աթոռի հետ։ Հարկ է ամեն բանից առաջ լայնագույն չափով զորացնել Մայր Աթոռը, մեր Ընդհանրական Եկեղեցու հեղինակության և հմայքի պահպանությունը լինելով կենսական։

***

Ո՞ւր է կանթեղը... Ծունկ եմ չոքում, աղոթում, հեկեկում...։ Ա՜խ, ո՞ւր է կանթեղը. Հայոց աշխարհի լուսատու կանթեղը մշտավառ...։ Նա միայն արդարներին և հավատով ապրողներին է տեսանելի. իսկ ես մեղավոր եմ։

— Տե՛ր, Քո ձեռքով վառեցիր այդ կանթեղը և կախեցիր երկնքից Հայաստանի կենտրոնում, հայ ժողովրդի սրտի մեջ։ Թո՛ղ վառ մնա այդ երկնային պարգևը, անմար և հավերժ, քանի հայ շունչ կա երկրիս երեսին, գիտակցություն և զգացմունք՝ նրա հոգու մեջ...։

***

Հայաստանյայց Եկեղեցին կենտրոնն է հայրենասիրության։ Կյանքում շատ երազներ եմ ունեցել, որոնք իրագործվել են. երազել եմ իմ Հայրենիքի վերականգնումը, ծաղկումն ու զարգացումը, որը իրականացել է իմ երազից էլ շքեղ։ Մեր անցյալ տարիները թշվառության տարիներ էին։ Այն արհավիրքը, որ բաժին ընկավ մեր ժողովրդին, մեր Եկեղեցուն, աննախընթաց է վերջին հարյուրամյակում։ Կոտորվեցինք սրի հարվածների տակ, մտրակի տակ։ Բայց, այժմ, վերջ են գտել մեր տառապանքները։ Իրողությունն այն է, որ մենք, որ ոչինչ չենք ունեցել, այժմ ունենք Հայրենիք, պետականություն, արվեստ, գրականություն, թատրոն, կոնսերվատորիա և հազարավոր վարժարաններ։ Աստված մեզ համար նոր վերածնության մի շրջան է ստեղծել։ Իմ հոգին վկայում է, և ես հավատում եմ, որ մեր ժողովրդի համար նոր սկիզբ և ասկեդար է արվել։ Թող ծաղկի մեր նորաբողբոջ Հայրենիքը գրական, գեղարվեստական և մշակութային բոլոր ոլորտներում։ Մեր հոգու աչքերը ուղղված են դեպի Հայրենիքի վերելքը և սրտատրոփ ակնկալություններով հետևում ենք նրա ամեն մի քայլափոխին, դեպի բարձրագույնն ու գեղեցիկը։

***

Մեր ազգային ամենամեծ հարստությունը, որ ժառանգություն ենք ստացել մեր հայրերից, ձեռագրերի ժողովածուներն են։ Ուրախ ենք, որ այդ հարստության ամենամեծ մասը գտնվում է մեր Հայրենիքում։ Մենք պարծենալ կարող ենք ամենաթաղաթակիրթ ազգերի կողքին մեր 20 000 տուփ կամ հատոր ձեռագրերով, ուր պահված են հայ մտքի և անցյալի ամբողջ արտադրությունը, մեր ազգային ամենամեծ հարստությունը։

***

Ես ավերակների մեջ կյանք և ոգի եմ գտնում։ Մեր ժողովուրդն էլ ավերակ է դարձել անցյալում. մենք նման ենք մեր երկրի ավերակներին, որոնք ունեն, սակայն, ստեղծագործական հոգի և շունչ և որոնք պահվել պահպանվել են ու կյանք տվել մեր երաժշտության, ճարտարապետության և մյուս արժեքներին։

***

Գեղեցիկ է մեր երկիրը, այդտեղ է Արարատը մշտապես իր ճերմակ գագաթով, առավոտյան՝ երկինքը իր ծիրանի գոտին է կապում նրա ճակատին, օրվա մյուս պահերին, տարբեր պպզումներով և երանգներով է զարդարում նրան, իր առանձնացած հպարտության մեջ։ Հայաստանի բարձրադիր լեռներից երևում է նա։ Առաջն է Արարատյան պատմական ընդարձակ դաշտը... նաշխրված Երասխի բազմաթիվ գետակիցներով։ Անդին՝ հայկական մյուս լեռները, Արագածների գագաթներով աշտարակված և որոնց միջից պսպղում է լուսավորչի կանթեղը։ Այս հրաշալի ավանդությունը իր բարձրը իմաստով հայ ժողովրդի հոգեկան աշխարհն է խորհրդանշում։ Դառնություններ, կորուստներ նյութական թե բարոյական, շատ ենք ունեցել։ Անկման այդ տխուր օրերին, չհանգավ լուսավորչի կանթեղը։ Հայ ժողովրդի իմաստության, գոյության, ձրգտումների սրբազան խորհրդանշանն է այն։

***

1914—1915 թվականի աղետաբեր օրերին Վասպուրականի, Ալաշկերտի և Վանա լճի հյուսիսային գավառների հայ ժողովուրդն ստիպված էր տեղահան լինել և գաղթել դեպի Էջմիածին և Արարատյան երկիրը. ականատես էինք այն աղեկտուր տեսարանին, որ կատարվում էր մեր շուրջը. իբրև Եղբայրական օգնության վարչության անդամ և ի պաշտոնե շփման մեջ էինք բոլոր շրջանների գաղթականությանց հետ, հարկավոր նյութական և բժշկական օգնություններ կարգադրելու։ Երասխի ափերից մինչև Էջմիածին, պողոտայի երկու կողմերը, վանքի ընդարձակ անտառի և Ճեմարանի բակի և

պարտեզի մեջ, պարիսպների տակ փռված էին մոտավորապես 150 000 փախստականներ բաց երկնքի տակ...։

***

Ի՞նչ լեզու կարող է ամենադույզն չափով պատկերավորել պատմական այդ մեծ, անսահման ողբերգությունը, եղեռնը, որ կատարվեցավ մեր գլխին։ Ի՞նչ լեզվով խոսենք, որ մեր ցավը, մեր անհատակ վիշտը, բոլորը անարդարության դեմ լսելի լինի այն ականջներին, որոնցից է կախված արդարության կշիռը վերականգնել։ Մենք կրոնավոր ենք, և քաղաքականությամբ չէ որ այստեղ զբաղվում ենք, այլ հանուն արդարության, հանուն տարապարտուց նահատակված միլիոնավոր մեր զոհերի, նրանց փոշիացած ոսկորների, մեր ձայնն ենք բարձրացնում, որ լսելի լինի, որտեղ պետք է։

Մարդկային խիղճը չպետք է տանի, որ մի ամբողջ ազգ կարգավորյալ կերպով դեպի մահ քշվի, և մնացորդները աշխարհի չորս կողմը հողմացրիվ լինեն։

***

Հայրենասիրությունը մի բնական զգացում է հաստատված մեր սրտի խորքերում։ Ինչպես բնական է սերը դեպի ծնողները և դատապարտելի այն որդու վարմունքը, որ անարգանքով է վարվում նրանց հետ, նույնչափ բնական է սերը և դեպի Հայրենիքը և դատապարտելի դեպի նորա շահերը ցույց տված ապերախտությունը։ Մենք ոչ միայն մեր ծնողների զավակներն ենք, այլև մեր Հայրենիքի. մեր կյանքի առաջին վայրկյանից կապված ենք Հայրենիքի հետ, նորա օդն ենք շնչում, նորա ջուրը խմում, նորա բերքերով կերակրվում։ Բնական է նույնպես և մարդու սերը դեպի յուր բնիկ ժողովուրդը։ Մեր երակների մեջ նույն արյունն է վազում. նույն վարքուբարքով, սովորություններով, նույն անցյալով և ապագա հույսերով կապված միմյանց հետ։ Ամենքի բերանում նույն լեզուն է հորջորջվում և հարյուրապատիկ և հազարավոր տարիների պատմություն, անցյալի հիշողություն, ուրախություն և վիշտ, հաջողություն և կամ ձախորդություն ընդհանուր է ամենքի համար։

***

Մեր ձեռքն է միայն մեր պատմական Հայրենիքի մի փոքր մասը, ավելի քան մի միլիոն հայ բնակչությամբ, հայրենի ավերակներով, ուր մեր կյանքի գոյության խարիսխը պիտի մնա այսուհետև ևս. բայց մեր ժողովրդի մեծագույն մասը հայրենազուրկ է և ցրված... Հայրենազուրկ և գաղափարազուրկ կյանքով ապրել չենք կարող. ազգային տեսակետով ապարախտ այս նոր պայմանների մեջ պետք է զորանա և ուռճանա Հայրենիքի և հոգևոր միության գաղափարը ավելի լայն և ավելի խորը, լուսավոր հասկացողությամբ։

***

Եկել հասել է պատմական այն օրը, երբ մեր չքնաղ Երկիրը լայնորեն բացել է ձեր առաջ իր դռները։ Երբ մեր պատմական Հայրենիքը կգնաք, ես ցանկանում եմ, որ նոր պայմանների մեջ, Հայաստանի հին քաղաքացիների կողքին ձեր ջանասիրությամբ, պարտականության կատարումով ետ չմնաք նրանցից, ընդհակառակը, արժանավոր հանդիսանաք այն շնորհին ու բախտին, որ ձեզ է ընկել։